

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2003թ. հունվար-հունիսին¹ հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1404.1 հազ. մարդ, որոնց 90.9%-ը կամ 1276.8 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.1%-ը կամ 127.3 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:


Ըստ գնահատման, զբաղված բնակչության 78.3%-ը զբաղված է եղել մասնավոր հատվածում, 21.4%-ը՝ պետական հատվածում և կառավարման համակարգում (որից 59.9%-ը տնտեսության բյուջետային հատվածում), իսկ 0.3%-ը՝ հասարակական և կրոնական կազմակերպություններում և հիմնադրամներում:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 29.5%-ի կամ 376.7 հազարի վերաբերյալ (առանց համատեղողների և կապալային պայմանագրով աշխատողների) տեղեկատվությունը ստացվել է մոտ 9000 խոշոր և միջին կազմակերպություններից ամսական և եռամսյակային պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: Վերոնշյալ կազմակերպություններում համատեղության կարգով և քաղաքացիա-իրավական պայմանագրերի հիման վրա ներգրավվել են աշխատանքի ևս 13.5 հազ. մարդ:

Ձբաղեցված աշխատատեղերի թվի դինամիկան 9000 կազմակերպություններում 2003թ. հունվար-մարտին

	2003թ. հունվար-մարտ, հազ.մարդ	Ընդամենի նկատմամբ, %	2002թ. հունվար-մարտ, հազ.մարդ	Ընդամենի նկատմամբ, %	2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Ընդամենը զբաղեցված աշխատատեղեր (աշխատողներ)	390.2	100.0	425.2	100.0	91.8
<i>այդ թվում՝</i>					
ցուցակային կազմի աշխատողների (առանց ներքին համատեղողների)	376.7	96.5	413.5	97.2	91.1
արտաքին համատեղողների	5.9	1.5	6.6	1.6	89.4
քաղաքացիա-իրավական պայմանագրերի հիման վրա աշխատողների	7.6	2.0	5.1	1.2	149.0

Ձբաղեցված աշխատատեղերի թվի (աշխատողների թվաքանակի) փոփոխությունը 9000 կազմակերպություններում 2003թ. հունվար-մարտին



¹ Ցուցանիշի հաշվարկման հիմքում դեռևս դրված չեն ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացված տվյալները, քանի որ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի ցուցանիշի մշակումն ավարտված չէ: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-հունիսին»

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ցուցակային կազմի աշխատողների, համատեղողների և քաղաքացիա-իրավական պայմանագրերի հիման վրա աշխատողների զբաղեցրած աշխատատեղերի թիվը հունվար-մարտին կազմել է 390.2 հազ. և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել 35.0 հազ.-ով կամ 8.2%-ով: Ցուցակային կազմի աշխատողների թվաքանակի (աշխատատեղերի) նվազում արտադրական ոլորտում հատկապես արձանագրվել է գյուղատնտեսության մեջ՝ 39.8%-ով (կամ 2.3 հազ. մարդ) արդյունաբերության ճյուղում՝ 17.6%-ով (կամ 18.3 հազ. մարդ), սոցիալական ոլորտում՝ գիտություն և գիտական սպասարկում ճյուղում՝ 18.9%-ով (կամ 2.3 հազ. մարդ) և բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտում՝ 18.5%-ով (կամ 2.4 հազ. մարդ), ինչը առավելապես պայմանավորված է վերջին շրջանում երկարատև հարկադիր վարչական արձակուրդում գտնվողների ազատման գործընթացի ինտենսիվությամբ: Աշխատողների թվաքանակի (աշխատատեղերի) 2.5%-ով աճ արձանագրվել է շինարարության մեջ՝ հանրապետությունում ընթացող լայնամասշտաբ շինարարությամբ պայմանավորված:

Վերոհիշյալ կազմակերպություններում ցուցակային կազմի աշխատողների թվաքանակի կրճատման պարագայում, 2003թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ արձանագրվել է արտաքին համատեղողների և քաղաքացիա-իրավական պայմանագրերի հիման վրա աշխատողների թվաքանակի 15.4%-ի հավելած, ինչը, թերևս, բացատրվում է տնտեսության սեզոնտալ փոփոխությունների ինտենսիվացմամբ, փոքր և միջին ձեռնարկատիրության ծավալների ընդլայնմամբ և շուկայական կոնյուկտուրայի գործունակության աստիճանի աճով: Նշվածները, թերևս, սկսել են սրել աշխատուժի արդյունավետ օգտագործման խնդիրը շուկայական մրցակցային հարաբերությունների «զամբյուղում» և այդ խնդրի լուծումը տեղափոխել ոչ կայուն, ժամանակավոր, սեզոնային և կոնյուկտուրային աշխատատեղերին առաջնություն տալու հարթություն:

Արտաքին համատեղողների և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատողների տեսակարար կշիռն առավել բարձր է եղել առողջապահության ոլորտում՝ 26.5%, շինարարության և արդյունաբերության ճյուղերում՝ 17.1%, կրթության համակարգում՝ 16.7%, բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտում՝ 7.7% :

2003թ. հունվար-մարտին վերոհիշյալ կազմակերպություններում հարկադիր վարչական արձակուրդում գտնվել են 12.6 հազ. մարդ կամ ցուցակային կազմի աշխատողների 3.3%-ը, նրանցից՝ 88.1%-ը՝ առանց աշխատավարձի պահպանման: Հարկադիր վարչական արձակուրդում գտնվողների թվաքանակի ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 16.6%-ով: Հարկադիր վարչական արձակուրդի միջին տևողությունը կազմել է 46.3 օր՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 18.1%-ով: Նույն ժամանակաշրջանում աշխատանքային օրվա միջին տևողությունը կազմել է 7.46 ժամ, իսկ մեկ աշխատողի հաշվով աշխատած ժամերի թիվը՝ 493 ժամ: Այս կազմակերպություններում ոչ լրիվ զբաղվածություն ունեցողները (թերզբաղվածները) կազմել են ցուցակային կազմի աշխատողների 2.8%-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 2.2%-ով:

2003թ. հունվար-մարտին աշխատողների շարժը բնութագրվել է հետևյալ կերպ. աշխատանքի ընդունվել են 16.1 հազ. մարդ, նրանցից 3.1 հազարը՝ նոր ստեղծված աշխատատեղերում, աշխատանքից դուրս են եկել 19.7 հազ. աշխատողներ, նրանցից 3.4 հազարը՝ ազատման կամ անձակազմի կրճատման հետ կապված, 10.3 հազարը՝ սեփական կամքով, մնացածը՝ այլ պատճառներով:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2003թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 154.6 հազ.աշխատանք փնտրողներից 99.2%-ը կամ 153.3 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 82.0%-ը կամ 125.7 հազ.մարդ, նրանցից 7.7 հազարը եղել են գյուղական բնակավայրերում ապրողներ:

2003թ. տարեսկզբից գործազուրկի կարգավիճակ ստացել են 10.0 հազ. մարդ, այդ թվում 1.2 հազարը՝ հունիսին, հաշվառումից հանվել են 11.7 հազ. մարդ, նրանցից՝ 25.6%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով, 0.2%-ը՝ վաղաժամկետ կենսաթոշակի ձևակերպման հետ կապված, մնացածը՝ այլ պատճառներով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹ 2003թ. հունիսին

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		նրանցից՝ գործազուրկներ			
	ընդամենը, հազ. մարդ	2002թ. հունիսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	այդ թվում՝ կանայք	2002թ.հունիսի նկատմամբ, %	
					ընդամենը	այդ թվում՝ կանայք
ք. Երևան	36.1	89.8	32.4	21.9	88.0	91.3
Արագածոտն	2.3	104.5	1.5	1.0	100.0	100.0
Արարատ	6.0	84.5	4.6	3.1	82.1	83.8
Արմավիր	8.5	96.6	5.8	3.4	92.1	94.4
Գեղարքունիք	8.9	101.1	6.4	4.0	98.5	95.2
Լոռի	26.7	105.5	21.8	14.5	102.8	104.3
Կոտայք	8.8	89.8	6.5	4.5	86.7	88.2
Շիրակ	32.9	97.6	27.4	21.1	94.5	97.7
Սյունիք	17.0	103.7	14	8.4	102.2	101.2
Վայոց ձոր	2.1	100.0	1.7	1.1	100.0	100.0
Տավուշ	5.3	115.2	3.6	2.3	90.0	95.8
Ընդամենը ՀՀ	154.6	97.2	125.7	85.3	93.9	96.0

Պաշտոնապես գրանցված գործազուրկների 93.9%-ը կազմել է քաղաքային բնակչությունը, մասնավորապես Երևանում՝ 25.8%-ը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 1.7%-ով, Գյումրիում՝ 20.0%-ը, աճելով՝ 9.6%-ով և Վանաձորում՝ 11.9%-ը՝ աճելով 1.5%-ով:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 67.9%-ը՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.2%-ով, 2002թ. հունիսի նկատմամբ՝ 1.5%-ով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ սեռի, տարիքային և կրթական կազմի¹ 2003թ. հունիսի վերջի դրությամբ

	Գործազուրկների թվաքանակը, %-ով ընդամենի նկատմամբ	
	ընդամենը	կանայք
Ընդամենը գործազուրկներ	100	100
մինչև 18 տարեկան	0.4	0.4
18 - 22	5.5	5.1
23 - 30	22.2	19.7
31 - 50	62.6	66.6
51 և բարձր	9.3	8.2
<i>կրթությամբ.</i>		
բարձրագույն	12.6	11.7
միջնակարգ մասնագիտական	25.0	23.9
ընդհանուր միջնակարգ	56.9	59.8
թերի միջնակարգ	5.5	4.6


Որոշակի փոփոխություն է արձանագրվել պաշտոնապես գրանցված գործազուրկների տարիքային և կրթական խմբերում: Այսպես, 2002թ. հունիսի համեմատությամբ 2003թ. հունիսին 0.8 տոկոսային կետով ավելացել է 23-30 տարեկան գործազուրկների տեսակարար կշիռը, փոխարենը՝ 0.3 տոկոսային կետով նվազել է 18-22 տարեկանների տեսակարար կշիռը: Աճի միտում է նկատվում միջնակարգ մասնագիտական (0.3%) և բարձրագույն (0.2%) կրթությամբ գործազուրկների թվաքանակում:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

2003թ. տարեսկզբից աշխատանքի տեղավորվել է 3435 մարդ, այդ թվում 86.9%-ը՝ գործազուրկներ, վերջիններիս թվաքանակից 52.5%-ը՝ կանայք: 2003թ. հունիսին աշխատանքի տեղավորված գործազուրկների 5.6%-ի գործազրկության տևողությունը կազմել է 1-3 ամիս, 8.6%-ինը՝ 3-6 ամիս, 15.0%-ինը՝ 6-12 ամիս, 70.8%-ինը՝ 12 ամիս և ավելի, իսկ աշխատանքի տեղավորման միջին տևողությունը (գործազուրկի կարգավիճակ ստանալու պահից մինչև աշխատանքի տեղավորման պահը) կազմել է 14.6 ամիս, կանանցը՝ 14.5 ամիս:

2003թ. հունիսին մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 185 չգբաղված մարդ, նախորդ ամսվա համեմատ աճելով 10.8%-ով:


Աշխատուժի առաջարկն ու պահանջարկը 2003թ. հունիսին¹ (հազ.մարդ)



2003թ. հունիսին գործազրկության միջին տևողությունը կազմել է 15.4 ամիս և 2002թ. հունիսի նկատմամբ նվազել է 0.1 ամսով:

ՀՀ մարզերում աշխատանք փնտրողներից աշխատանքի տեղավորվածների տեսակարար կշիռը տատանվել է 0.3%-ից (Շիրակի մարզ) մինչև 7.6% (Վայոց ձորի մարզ) սահմաններում: Այդ ցուցանիշի տատանումն ըստ մարզերի, գրաֆիկորեն պատկերված է ստորև.

(%-ով՝ աշխատանք փնտրողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ)



Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. հունիսին հանրապետությունում կազմել է 7.4 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3186 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես զրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. հունիսին կազմել է 9.0% և 2003թ. մայիսի համեմատ մնացել է նույն մակարդակին, իսկ 2002թ. հունիսի նկատմամբ նվազել 0.5 տոկոսային կետով:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: